

ՀԱՅԱՍՏԱՆԸ և ԻՐԱՆԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԻՆՏԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ԱՅԼԸՆՏՐԱԸՔ Զետագոտական կենտրոնի ղեկավար
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բանալի բառեր. տարածաշրջանային ինտեգրացիա, ԵԱՏՄ, Իրան, տնտեսություն

Իրանը ոչ բարեկամ երկրներով շրջապատված Հայաստանի համար ներկայացնում է ռազմավարական առումով կարևոր միջանցք՝ միջոցով նավահանգիստների միջոցով արտասահմանյան շուկաներ մուտք գործելու համար: Իրանի ներառումը ԵԱՏՄ-ում, Հայաստանին թույլ է տալիս զգալիորեն կրճատելու հարկային ծախսերը և ազատվելու լրացուցիչ բյուրոկրատական դժվարություններից:

Մեր կարծիքով, Հայաստանի և Իրանի փոխհարաբերությունները անհրաժեշտ է ուսումնասիրել ինչպես երկկողմ փոխհարաբերությունների տեսանկյունից, այնպես էլ Հայաստանի դերի տեսանկյունից Իրանի և ԵԱՏՄ այլ երկրների փոխհարաբերությունների տեսանկյունից: Այդպիսի գործընթացմներին նպաստում են մի շարք աշխարհատնտեսական եւ ռազմավարական գործոններ.

- Հայաստանը ԵԱՏՄ միակ երկիրն է, որը անմիջականորեն սահմանակից է Իրանին և նրա հետ ունի շատ սերտ տնտեսական կապեր,

- Որպես ԵԱՏՄ անդամ, Հայաստանը նախաձեռնել է ազատ գոտու ստեղծման վերաբերյալ պայամնագիր Իրանի և ԵԱՏՄ երկրների հետ:

- Հայաստանն ու Իրանը պարբերաբար կազմակերպում են միջազգային առևտուր արդյունաբերական ցուցահանդեսներ, որը համարվում է կարևոր գործիք երկու կողմերի արտադրանքի տեղական շուկա մուտք գործելու համար:

- «Հյուսիս - Հարավ» միջանցքի ակնկալվող գործողությունը հնարավորություն կտա Մեղրիի միավորմանը Վրաստանի Բավրա սահմանի հետ, ապահովելով լրացուցիչ լոգիստիկ ալիքը Իրանից ապրանքների առաքման համար Սևծովյան նավահանգիստներով դեպի տարբեր երկրներ,

- Իրանական ընկերությունների օգտագործման հնարավորությունը, որը ներկայացվում է որպես «Արագ» ազատ տնտեսական գոտի, այնպես էլ որպես Հայաստանի ազատ տնտեսական գոտի, որի արդյունքում հնարավոր է արտահանել արտադրանքը, ապահովելով խոշոր ռուսական շուկայի կարիքները:

▪ Օգտագործելով սեփական ռազմավարական դիրքը, Հայաստանը ոչ միայն կապահովի հարմար տարանցիկ փոխադրումներ ապրաքնների մատակարարման համար, Իրանից և ԵԱՏՄ երկրներից և Վրաստանից, բայց և կարող է իրացնել տեղական արտադրանքը այդ շուկաներում:

Հատկապես գրավիչ է ներկայանում իրանական շուկան հայաստանյան ձեռնարկությունների համար, որոնք փորձում են գտնել իրենց տեղը և ընդլայնել այն: Միևնույն ժամանակ, ինչպես և նախկինում, Իրանը կիրառում է խիստ միջոցներ ներքին շուկայի պաշտպանության համար: Հետևաբար, անհրաժեշտ է բանակցել իրանական գործընկերների հետ մաքսային խոչընդոտների կրճատման համար ապրաքնների և ծառայությունների նկատմամբ, որոնք մրցունակ են և պահանջարկված են Իրանում: Հայաստանյան կողմը մշակել է մոտավորապես քառասուն խումբ ապրանքների անվանացանկ, որոնց մի մասի նկատմամբ սպասվում են մաքսատուրքերի կրճատումների Իրան արտահանման դեպքում:

Համատեղ ջանքերով կազմվել է գործողությունների պլանը, ըստ որի մոտ ապագայում պետք է կնքվեն համաձայնագրեր մի շարք ձեռնարկությունների միջև, ինչպես նաև պետք է շարունակվի հայկական ապրանքների ցուցահանդես-վաճառքը Իրանում, իսկ իրանականը՝ Հայաստանում: Միայն 2016թ. ակտիվ հայ-իրանական առևտրատնտեսական շփումները արագացրեցին վերջին տարիների համագործակցության տեմպերը: Մասնավորապես, միայն անցյալ տարվա հոկտեմբերին Թեհրանում կայացավ ցուցահանդես «ARMENIA EXPO - 2016 թ», որին մասնակցող 80 ընկերություններ ներկայացրեցին արդյունաբերական արտադրանքն ու ծառայությունները, իսկ Երևանում՝ արդյունաբերական ցուցահանդես «EXPO–RUSSIA ARMENIA plus IRAN-2016» ավելի քան 40 իրանական ընկերությունների և ֆիրմաների ներկայացուցիչներով, որոնք աշխատում էին իրանական շուկայի և բիզնեսի տարբեր ոլորտներում:

Համագործակցության ամրապնդմանը նպաստեցին նաև երկու երկրների և ԵԱՏՄ կոնկրետ գործողությունները 2015-2016թթ.: Մասնավորապես, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամները որոշում կայացրեցին սարքավորումների և բաղադրիչների ներմուծման տուրքերի ազատման մասին որոնք ներմուծվում են Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցման համար, որն էլ իր հերթին կմիացնի Կովկասը հարավային հարևանի հետ: «Energoimpeks» բաժնետիրական ընկերության անդամ Հայաստանի կառավարության որոշմամբ նախատեսված է բարձրացնել բնական գազի ներկրումը Իրանից և բարձրացնել Իրան - Հայաստան գազատարի արդյունավետությունը:

Կողմերի միջև համաձայնությամբ, ընթանում է երրորդ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի շինարարություն Իրանի և Հայաստանի միջև,

որն իրականացվում է Իրանական կողմի վարկով: Աշխատանքների ավարտը նախատեսվում է 2018թ.: Երրորդ բարձրավույտ էլեկտրահաղորդման գծի շինարարությունը հանրավորություն կտա 2018 թ. բարձրացնել գազի և էլեկտրաէներգիայի փոխանակումը Հայաստանի և Իրանի միջև: Նախաձեռնված է նաև Արաքս գետի վրա Մեղրիի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը: Ակնհայտ է, որ նոր քաղաքական տնտեսական պայմաններում Իրանը կծգտի իրացնել իր ապրանքներն ու ծառայությունները ոչ միայն Հայաստանում: Հայկական սպառողական շուկան չի կարող գոհացուցիչ լինել իրանական ապրանքների համար: Հաշվի առնելով հին և կանխատեսելի փոխհարաբերությունները Թուրքիայի, Ադրբեջանի, Իրաքի, Ադվանստանի, Թուքմենստանի և Պակիստանի միջև, Իրանը կարող է ապավինել Հայաստանի աջակցությանը ԵԱՏՄ շուկա արտահանման դեպքում հարմար աշխարհագրական դիրքերով: Մյուս կողմից, Հայաստանն ունի ելք տարածաշրջանից միայն Իրանից տարածքով: Հենց երկկողմ և բազմակողմ հարաբերությունների ամրապնդման համատեքստում անհրաժեշտ է դիտարկել Իրանի նախագահ Հասան Ռոհանիի պաշտոնական այցը Հայաստան: Զուգահեռաբար, Հայաստանի նախաձեռնությամբ ԵԱՏՄ երկրները սկսեցին համատեղ ուսումնասիրությունը Իրանի հետ ազատ առևտրի գոտու համաձայնագիր կնքելու համար: Հայաստանը ակտիվորեն նպաստում է ԵԱՏՄ հանձնաժողովի և Իրանի միջև բանակցային գործընթացի զարգացմանը, նպատակ ունենալով արագ հասնելու այս համաձայնագրի ստորագրմանը: Այս ամենի հետ կապված, անհրաժեշտ է հաշվի առնել Պարսից ծոցում Սևծովյան տրանսպորտային տարանցիկ միջանցքի կառուցման կարևորությունը: Հայաստանը ԵԱՏՄ միակ անդամն է, ով ունի ցամաքային սահման Իրանի հետ, իսկ վերոնշյալ միջանցքի կառուցումը հարթակ կստեղծի հեշտ և անվտանգ մուտք գործել դեպի Պարսից ծոց և նրա սահմաններից դուրս և հետագայում նաև Հնդկական օվկիանոս¹:

¹ <http://www.panorama.am/ru/news/2016/12/26/>

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Հայաստանը և Իրանը տարածաշրջանային ինտեգրացիայի նոր պայմաններում
Բանալի բառեր. տարածաշրջանային ինտեգրացիա, ԵԱՏՄ, Իրան, տնտեսություն

Անկախացումից ի վեր Հայաստանը գտնվում է լրջագույն փորձությունների շրջանում: Իրանի հետ տնտեսական համագործակցությունը նոր հեռանկարներ է բացում ոչ միայն երկկողմ, այլև բազմակողմ ծաշրջանային կապերի զարգացման համար: Մեր համոզմամբ, անհրաժեշտ է հաշվի առնել Պարսից ծոցում Սևծովյան տրանսպորտային տարանցիկ միջանցքի կառուցման կարևորությունը: Հայաստանը ԵԱՏՄ միակ անդամն է, ով ունի ցամաքային սահման Իրանի հետ, իսկ վերոնշյալ միջանցքի կառուցումը հարթակ կստեղծի հեշտ և անվտանգ մուտք գործել դեպի Պարսից ծոց:

Татул МАНАСЕРЯН

Необходимость формирования системы закупок в Республике Армения

Ключевые слова: сельское хозяйство, аграрная политика, закупки, экономика, экономическое развитие

С момента обретения независимости, Армения находится на стадии серьезных испытаний. Экономическое сотрудничество с Ираном открывает новые перспективы не только для двустороннего, но и для многостороннего сотрудничества. Мы считаем, что необходимо принимать во внимание важность построения Черноморского транспортного коридора на Персидском заливе. Армения является единственным членом Евразийского экономического союза, который имеет сухопутную границу с Ираном, а строительство указанного коридора обеспечит легкий и безопасный доступ к Персидскому заливу.

Tatul MANASERYAN

Armenia and Iran in a new format of regional integration

Key words: regional integration, EEU, Iran, economy

Since gaining independence, Armenia is at the stage of serious challenges. Economic cooperation with Iran opens new prospects not only for bilateral but also for multi-lateral cooperation. We believe that it is necessary to take into account the importance of building the Black Sea transport corridor on the Persian Gulf. Armenia is the only member of the Eurasian Economic Union, which has a land border with Iran, and the construction of this corridor will provide easy and safe access to the Persian Gulf.